ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.3. Արևելյան Եվրոպա: Բնական պայմանները և ռեսուրսները: Բնակչությունը

Գևորգ Լուկաչը (Ղուկասյանը) եղել է մշակույթի նախարար: Ռումինահայ գաղութը ստեղծվել է է V դարից: Ռումինահայերը բավական բարձր պաշտոններ են զբաղեցրել: Ռումինիայի Գիտությունների ակադեմիայի (ԳԱ) ակադեմիկոս, համաշխարհային ճանաչում ստացած բժշկուհի Աննա Ասլանը (Ասլանյանը) հիմնադրել է Բուխարեստի՝ Եվրոպայում ծերաբուժության և ծերաբանության միակ ինստիտուտը: Նրա անունը քանդակվել է Հիպոկրատի մարմարե հուշարձանին (Հունաստան):

Ռումինահայ Վիրջիլ Աքթարյանը եղել է Բրաշովի տրակտորի գործարանի տնօրեն, մեքենաշինության նախարար, նյարդավիրաբույժ Բաղդասար Դումիտրուն՝ Ռումինիայի ԳԱ անդամ և առողջապահության նախարար: Ռումինահայ մաթեմատիկոս, աստղագետ, ֆիզիկոս Հարեթ Սպիրուն եղել է լուսավորության և հանրային կրթության նախարար:

...

Մինչև 1950-ական թթ. կեսերը Ռումինիայի հայոց թեմական առաջնորդն էր Վազգեն Պալճյանը (1955-1994-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա): Մոլդովահայ թեմի առաջնորդ է եղել նաև Ներսես Աշտարակեցին, ով հետագայում եղել է Ամենայն Հայոց կաթողիկոս: Կոտովսկ քաղաքում են ապրել Հարություն Ալամդարյանը, Միքայել Նալբանդյանը, դերասան Պետրոս Ադամյանը: